

ՅԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷՐ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ

Մեր իրականության մեջ ճարտարապետների հեղինակային իրավունքներին անդրադարձել է մեծանուն վիպասան Ստեփան Զորյանը: Նա անտարբեր չէր անցնում քաղաքում, ավանում կամ որևէ գյուղում կառուցված հաճելի տպավորություն ստեղծող շինության մոտով և հետաքրքրվում էր նրա հեղինակով, մինչ շինության վրա այդ մասին ոչինչ գրված չէր գտնում ու բողոքում էր դրա դեմ: Նա այն միտքն է արծարծում, թե բանաստեղծը մի ոտանավոր աշխատելիս, վերևում գրում է իր անուն-ազգանունը. հույնական և մյուս արվեստագետները՝ նորակերտ երկերի վրա դրոշմում են իրենց ով լինելը: Մինչդեռ ճարտարապետը, որ ստեղծում է որևէ շինություն կամ մի անագին համալիրի նախագիծ, հետևյալում նրա ճիշտ իրականացմանը, մեզ համար մնում է անհայտ նրա ով լինելը: Ըստ որում, այդ սովորույթը հայերիս մեջ հեռուց է գալիս: Մինչև հիմա էլ կան ճարտարապետական զգալի արժեք ունեցող շատ ստեղծագործություններ, որոնց հեղինակների անունները հայտնի չեն: Նման իրավիճակը անարդար էր:

Եվ իրոք, մինչև հիմա մասնագետները վիճում են, թե ովքեր են Ավանի տաճարի, Հռիփսիմեի կամ Զվարթնոցի հեղինակ-ճարտարապետները: Կաթողիկոսներ Հովհանն Բագարանցի՝ն, Կոմիտաս՝ը, կամ Ներսես Գ-ն, թե՛ իրենք միայն պատվիրատուներն են, իսկ հեղինակ-ճարտարապետները ուրիշներն են, որոնց անունները մոռացվել են, կամ մոռացության տրվել: Նման մի օրինակ էլ VII դարի հանգուցային հուշարձան Բագարանն է: Պատմությանը հայտնի է նրա կառուցման պատվիրատու Բուրը, մինչ ճարտարապետի վերաբերյալ ոչինչ հայտնի չէ:

Այս առումով երջանիկ բացառություններ են միջնադարյան ճարտարապետներ Թուրոսակը, որ Գորի բաղաբից ոչ հեռու կառուցել էր Ատեն տաճարը (7 դ.), որի հարավային ճակատի քարակերտ ստորին շարքերի վրա թողել է շինարարական վիճագիր արձանագրություն, Մանուելը, որ դեռևս 915—921 թթ. կառուցել է Աղթամարի հանրահռչակ Սուրբ Խաչ եկեղեցին, Տրդատը, որ 970—80-ական թթ. կառուցել է Արգինի կաթողիկոսական եկեղեցին, այնուհետև Անիի Աստվածամոր անդուգական տաճարը և այլ մեծագործ շինություններ, վերակազմել Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի Սուրբ Սոֆիայի աշխարհահռչակ տաճարի մեծ չափեր ունեցող վնասված գմբեթը:

Հեղինակի և հեղինակային իրավունքի ճանաչումը նշան է ժողովրդի հոգևոր կուլտուրայի զարգացման որոշակի աստիճանի: Հայկական հանրագիտարանում «Հեղինակ» բառահոդվածի դիմաց գրված է. «զեղարվեստական, հրատարակատեսակային ստեղծագործության, գիտական հետազոտության, նախագծի, գյուտի և այլնի ստեղծողը»: Նույն տեղում հեղինակային իրավունքի մասին կարդում ենք. «... քաղաքացիների սահմանադրական իրավունքներից է»:

Այս առումով դրությունը բարձր չէ հատկապես մեր օրերում, երբ կառուցվում են մեծ թվով նշան արժանի շինություններ և այլ կառուցվածքներ, բայց հայտնի չէ, թե ովքեր են դրանց հեղինակները: Գեռ ավելին, շատ հաճախ ենք հանդիպում դեպքերի, երբ մեկի ստեղծագործությունը վերագրվում է մեկ ուրիշի, հատկապես անուն համաձայն հեղինակի: Նկատի ունենալով, որ շատերի մոտ նման դեպքեր կան, և չցանկանալով ուրիշների գործերին խառնվել, օրինակներ բերենք կապված տողերիս հեղինակի հետ:

Հայաստանի ամենամեծ հիդրոէլեկտրակայանի՝ Գյումրուի հեկ-ի ավարտվելուց հետո (1958 թ.), նրա մուտքի ճակատի ձախ կողմում փակցված մարմարե ողորկ սպի վրա հայերեն և ռուսերեն վիմագրվեց հիդրոհանգույցի կառուցման ղեկավար, հմուտ շինարար Գ. Հ. Աղաբաբովի անուն-ազգանունն ու պաշտոնը: Եվ անհա հայերեն տարբերակում ռուսերեն ինժեներ բառը թարգմանաբար վիմագրվեց ճարտարապետ: Հայերագրչի միմյանց հաջորդող մի քանի ղեկավարներ խոստացան թյուրիմացությունն ուղղել, այդպես էլ մոռացության տվին ու մի քանի տասնամյակ այդ կայանի ճարտարապետը ներկայացավ Գ. Հ. Աղաբաբովը: Որոշ շրջաններում այդ անունով ճանաչում էին ճարտարապետ Գ. Գ. Աղաբաբյանին (բայց ոչ ճարտարապետական մասի իսկական հեղինակ Տիրան Մարությանին):

Հայկական Սովետական Հանրագիտարանի 568 էջում «Երևան» բառահոդվածի հեղինակները (Մ. Հասարթյան, Մ. Միքայելյան, Ա. Գրիգորյան) մեզ հետաքրքրող մասը այնպես են շարադրել, որ Ազատության պողոտայի և նրա կառուցապատման նախագծի հեղինակը Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված հուշարձանի հեղինակներն են: Դա ճիշտ չէ, իրականում այն Երևան ՀԷԿ-ի մշտական ավանն է, նախագծված Հայհիդրոնախագծում տողերիս հեղինակի կողմից:

Արգինի ՀԷԿ-ի մշտական ավանը, որը կառուցվելուց անմիջապես հետո փոխարկվեց թ. 1 առողջարանի, վերագրվում էր մեծանուն ճարտարապետ Ս. Սաֆարյանին (ճարտարապետ Կ. Խոսրաբաշյանի պատմածը), Ավանի գլխավոր հատակագիծը՝ ճարտարապետ Կ. Ղազարյանին (տե՛ս ՀՄՀ-ի հատոր 2, էջ 47, հոդվածի հեղինակ Հ. Խաբեկյան և ուրիշներ):

Կապանի երաժշտական դպրոցը և համերգասրահը, որ այժմ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի մասնաճյուղն է, անձամբ նախագծվել է իմ կողմից (Հայհիդրոնախագծում, շեֆակյան կարգով): Տարիներ առաջ «Սովետական արվեստ»-ի համարներից մեկում համերգասրահի լուսանկարի տակ, որպես հեղինակ գրված էր ճարտարապետ Ս. Գուրգադյանի անունը, հակառակ խմբագրության վստահ ուղղելու խոստմանը, այնուամենայնիվ մնաց որպես չտղղված վրիպակ:

Եվս մի օրինակ, Գառնի գյուղի վերակառուցման գլխավոր հատակագիծը, դարձյալ շեֆակյան կարգով կատարվել է Հայհիդրոնախագծում, հեղինակը՝ տողերիս գրողն է, մինչ որպես այդպիսին հիշվում է հանույթ կատարողը, նույն ինքը՝ նախագիծը տեղակապող Աղվան Հախվերդյանը: Հետագայում գյուղի հյուսիս-արևելակողմում մի շինություն տեղակապելու կապակցությամբ «Հայգյուղնախագիծ» ինստիտուտում հատակագիծը նախօրինակից ուղղակի կրկնօրինակվում է, հանձնվում գյուղին այլ հեղինակային ստորագրություններով: Նրանք նախագիծը չէին փոխել, քանի որ այն միանգամից իրականացված էր, բոլորն իրենց տնամերձերում նոր տներ էին կառուցել, ճանապարհները բացվել էին, այդպես միանգամից չեն կառուցվում քաղաքներում: Գյուղի և քաղաքի կառուցապատման պայմանները միանման չեն:

Իմ աշխատավայրում գործում էին գերազանցապես ինժեներներ՝ հիդրոտեխնիկներ, էլեկտրատեխնիկներ, էներգետիկներ, հիդրոլոգներ, երկրաբաններ, հետախույզներ, կոնստրուկտորներ և ուրիշներ: Մթնոլորտը ինժեներական էր, ճարտարապետական չէր: Եվ այդ միջավայրում ես աշխատեցի շուրջ 52 տարի, ստեղծեցի Հայաստանի գրեթե բոլոր (որոշ բացառություններով) մեծ

ու փոքր հիդրոէլեկտրակայանների համալիրների ճարտարապետական նախագծերը, և այնուամենայնիվ այդ նախագծային ինստիտուտի ղեկավարությունը չհաշտվեց այն մտքի հետ, որ ճարտարապետը իրավունք ունի իր ստեղծածի հեղինակը համարվել, ունենալ հեղինակային իրավունք:

«Հեղինակային իրավունքը» պատասխանատվություն լինելով, նաև հաճելի առավելություն է հեղինակի համար: Այդ, ինչ խոսք, հասկանում էին հիշյալ ղեկավարները, սակայն երբեմն անբարդացակամություն էին դրսևորում ճարտարապետների նկատմամբ:

Ճարտարապետների միության համագումարներից մեկում որոշվեց, գրողների միության օրինակով, տպագրել տեղեկագիր, որտեղ կգրանցվեն ճարտարապետները իրենց կատարած գործերով: Այդ որոշումը այդպես էլ չիրագործվեց, թերևս ընտրված խմբագրական կոլեգիայի ոչ շահագրգռված անդամների մեղքով: Անհրաժեշտ է, որ այդ որոշումն իրագործվի անապայման: Հիմա ճարտարապետներից և կամ երևանի պատմությունը շարադրողներից ոչ ոք չի կարող քաղաքի շատ թե քիչ արժեքավոր կառույցների նախագծող հեղինակի, կառուցող շինարարի ով լինելը, ինչպես և կառուցման ժամանակը ճշտությամբ իմանալ: Կասկած չի կարող լինել, որ Քաղխորհուրդը անհրաժեշտ պիտի համարի և իրականացնի բոլոր տվյալները պարունակող ամենամյա տարեգրքի հրատարակումը, որի օգտակարությունը կգնահատվի նաև մեր հետևորդների կողմից:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը դեռևս 1956 թ. հունիսի 12-ին մի շատ կարևոր որոշում է ընդունել: Տեղին ենք համարում այն ստորև բերել նույնությամբ. «Հայկական ՍՍՌ քաղաքներում շենքերի նախագծման և կառուցման որակի հետագա բարձրացու-

մը խթանելու, ինչպես նաև ճարտարապետական-հատակագծային լավագույն լուծումներ ստեղծելու նպատակով, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը որոշում է.

Ընդունել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Ծինարարության և Ճարտարապետության գործերի պետական կոմիտեի առաջարկը և թույլատրել նրան՝ քարե հուշատախտակներ փակցնելու Հայկական ՍՍՌ-ում կառուցված լավագույն բնակելի, քաղաքացիական, արդյունաբերական շենքերի և ինժեներական կառուցվածքների գլխավոր նախատեսիին, նշելով շինարարության ավարտման տարեթիվը, նախագծային և շինարարական կազմակերպությունների անունը և նախագծի հեղինակի ու աշխատանքը կատարողի ազգանունը:

Այս, իրոք կարևոր, բոլորի կողմից հավանության արժանացած որոշումը աչքաթող է արված, նրա կարևոր դերը չի ծառայեցվում նախագծման ու շինարարության շահերին: Մի դեպքում միայն այն իրագործվել է, երբ արվում էր հայ մեծ ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 100-ամյակը, նրա նախագծած և կառուցումը ղեկավարած մի քանի շենքերում տեղադրվեցին վիմագիր քարասալեր:

Ըստ երևույթին ավելի դյուրին կլինի այդ, այսպես ասած, վիմագիր շինարարական արձանագրությունները, մեր նախնիների օրինակով, իրականացնել ոչ թե առանձին սպաքարերի, այլ շինության պատերի երեսապատված քարերի վրա: Եվ ապա, այդ անել ոչ թե սպասելով հեղինակների ծննդյան 100-ամյակների գալու, այլ շինությունը շահագործման հանձնելու անմիջապես նախօրյակին:

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ՀՀ վաստակավոր շինարար, ճարտարապետության դոկտոր, ճարտարապետության համաշխարհային Բիննալեի դասիներկիր

ՅՈՒՆԵՍԿՕ-Ն՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵՂԻՆԱԿԻ

Ծուրջ 40 տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ն զբաղվում է միջազգային հեղինակային իրավունքի համակարգի կատարելագործմամբ, որը պաշտպանում է հեղինակների իրավունքները, հեշտացնում նրանց ստեղծագործությունների տարածումը և նպաստում ժողովուրդների փոխըմբռնմանը: Հեղինակային իրավունքը գրական, գեղարվեստական և գիտական սեփականության իրավաբանական ձևն է, որն աներկբայորեն ճանաչվում է մարդու իրավունքների միջազգային հռչակագրով: Ստեղծագործության սեփականության իրավունքի պահպանումը մշակույթի ամենամահրաժեշտ քաղաքանմասերից է:

Հեղինակային իրավունքը, վերաբերում է բոլորիս, քանի որ այն իրենից ներկայացնում է մի շարք փոխկապակցված օղակների շղթա: Իհարկե, այն առաջին հերթին վերաբերում է գրողներին, երաժիշտներին, ճարտարապետներին, նկարիչներին, լուսանկարիչներին, թարգմանիչներին և այն անձանց, որոնց գործերը առաջարկվում է լայն հասարակությանը: Հեղինակային իրավունքի նշանակությունը կայանում է նրանում, որ սպասուկվի նրանց գործունեության հասարակական ճանաչումը և համապատասխան պարգևատրումը: Օրենքը պետք է պահպանի նաև ստեղծագործությունները այն աղավաղումներից, որոնք վնասում են հեղինակին:

Մի շարք երկրներում պաշտպանվում են նաև թատրոնի դերասանների և կատարողների հեղինակային իրավունքները:

Միջազգային երկու փաստաթղթեր կարգավորում են

հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրները: Դրանցից մեկը Բեռնի կոնվենցիան է, որը պաշտպանում է գրական և գեղարվեստական ստեղծագործությունը, մյուսը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ ընդունված հեղինակային իրավունքի մասին համաշխարհային կոնվենցիան է:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն իսկապես մեծ գործ է անում մասնագետների և քննչության շրջանում ինֆորմացիայի տարածման ուղղությամբ: Եռամսյակը մեկ այն հրատարակում է «Հեղինակային իրավունքի մասին» բյուլետեններ՝ անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով: Այդ գրքույկներում տարբեր երկրների մասնագետներ թննարկում են հեղինակային իրավունքի կարևորագույն սկզբունքները: 1994—95 թթ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն կիրառարակի մի ընդգրկում, լայնածավալ աշխատություն, որն արտացոլելու է հեղինակային իրավունքի օրենսդրությունը բոլոր հնարավոր մանրամասներով, դեպքեր դատական պրակտիկայից և քիբիոգրաֆիան:

Հեղինակային իրավունքի մասին հատուկ գիտահանրամատչելի ծրագրով և տեսաժապավենների օգնությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն փորձում է գրավել լայն հասարակության ուշադրությունը: Արդեն պատրաստ է առաջին տեսաժապավենը: Ֆրանսիացի միջ Մարսել Մարսոն իրեն բնորոշ նուրբ հումորով, ժեստերի և միմիկայի լեզվով 12 րոպեում բացատրում է, թե ի՞նչ է հեղինակային իրավունքը, ինչու՞ է այն անհրաժեշտ պաշտպանել և պահպանել: